



**«ԷՅՎԻՍԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ԸՆԴ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ**

**«ՏԵՔՍ» ՓԲԸ  
ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ԾԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ  
ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

*2022թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՍԱՐ*

**ԵՐԵՎԱՆ  
ՀՈՒՆԻՍ- 2023**

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

Անկախ աուդիտորի եզրակացություն.....	2
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն.....	4
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն.....	5
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն.....	6
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն.....	7
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ.....	8

## «ԷՅՎԻՍԻ ԲՈՆՍՎԼԹԻՆԳ ԸՆԴ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ

ՀՀ, ք Երևան Նուբարաշեն, 10 փող, տուն 6

ՏԳՀ, Երևան, Մյասնիկյան պողոտա 5/1

Հեռ: (010) 57 28 46

ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ 048,

ՏՐՎԱԾ ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԿՈՂՄԻՑ -02.08.2006թ ԱՆԺԱՄԿԵՏ

Consulting&Audit

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱԳՎԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԿ ԱՆԴԱՄ,  
ԳՐԱՆՑՄԱՆ ԱՄՍԱԹԻՎ 2020Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29, ՀԳԳՀ՝ 1 20 0440

## ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

*Ներկայացվում է «Տեքս» փակ բաժնետիրական ընկերության հիմնադիրին*

### Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Տեքս» ՓԲԸ-ն և նրա դուստր կազմակերպությունների (այսուհետ՝ Խումբ) համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2022թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, և համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Խմբի ֆինանսական վիճակը 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն ( այսուհետ ՓՄԿ-ի ՖՀՄՍ-ներ):

### Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի (ՀՄԴ-Վարքագիրը) և ՀՀ-ում կիրառելի ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող վարքագծի պահանջների, և պահպանել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պահանջները՝ այդ կանոնների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

### Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՓՄԿ-ի ՖՀՄՍ-ների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Խմբի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Խումբը լուծարելու կամ Խմբի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

**Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար**

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն համախմբված ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն մենք՝

- ✦ հատկորոշում և զննահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ✦ ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- ✦ զննահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- ✦ եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների վերաբերյալ էական անորոշություն, որը կարող են նշանակալի կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Խմբին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը,
- ✦ գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը,

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցվում ենք կառավարման օղակներում գտնվող անձանց հետ աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հավաստիացում, որ պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և որտեղ կիրառելի է, անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

28 հունիսի 2023թ.

Գլխավոր տնօրեն՝

Աուդիտոր

Մ. Պետրոսյան

Ա. Մխիթարյան

## Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն


«ՏԵՔՍ» ՓԲԸ

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար դրամ	Ծանոթագրություն	2022թ. դեկտեմբերի 31- ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31- ի դրությամբ
<b>ԱԿՏԻՎ</b>			
<b>Ոչ ընթացիկ ակտիվներ</b>			
Հիմնական միջոցներ	4	40 324	53807
Ոչ նյութական ակտիվներ	5	725	868
Գուդվիլ	6	1 088 628	555898
Ներդրում ասոցիացված կազմակերպությունում	7	59 278	132974
Տրված փոխառություններ	8	13 510 252	17827603
Հետաձգված հարկային ակտիվներ	23	16 644	10998
<b>Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ</b>		<b>14 715 851</b>	<b>18 582 148</b>
<b>Ընթացիկ ակտիվներ</b>			
Պաշարներ	9	280 439	1 602 485
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	10	2 031 056	5 405 811
Տրված փոխառություններ	8	55 677	29 078
Դրամական միջոցներ	11	82 453	205 517
Այլ ընթացիկ ակտիվներ		2 238	11 018
<b>Ընդամենը ընթացիկ ակտիվներ</b>		<b>2 451 863</b>	<b>7 253 909</b>
<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ</b>			
<b>ԿԱՊԻՏԱԼ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>			
<b>Սեփական կապիտալ</b>			
Համարված բաժնետիրական կապիտալ	12	1	1
Զբաղիված շահույթ (չձածկված վնաս)		5 837 035	3 839 188
Զվերահսկվող բաժնեմաս	6	(3 750)	(3 736)
<b>Ընդամենը սեփական կապիտալ</b>		<b>5 833 285</b>	<b>3 835 453</b>
<b>Ոչ ընթացիկ պարտավորություններ</b>			
Վարկեր և փոխառություններ	13	1 051 789	1 658 978
<b>Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ</b>		<b>1 051 789</b>	<b>1 658 978</b>
<b>Ընթացիկ պարտավորություններ</b>			
Վարկեր և փոխառություններ	13	8 371 659	13 959 494
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	14	1 841 879	6 321 030
Պահուստներ	15	69 102	61 102
<b>Ընդամենը ընթացիկ պարտավորություններ</b>		<b>10 282 640</b>	<b>20 341 626</b>
<b>ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>		<b>17 167 714</b>	<b>25 836 057</b>

Տնօրեն՝

Վ. Հովակիմյան



Գլխավոր հաշվապահ՝

Ա. Մարտիրոսյան

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Խումբի ղեկավարության կողմից 2023թ. հունիսի 28-ին: Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ (էջ 8-25):

## Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն

«ՏԵԶՍ» ՓԲԸ

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար դրամ	Ծանոթագրություն	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
<b>Շարունակվող գործունեություն</b>			
Հասույթ	15	5 564 134	10 971 289
Վաճառքի ինքնարժեք	15	(2 860 849)	(7 156 245)
<b>Համախառն շահույթ (վնաս)</b>		<b>2 703 285</b>	<b>3 815 044</b>
Իրացման ծախսեր	17	(244 145)	(292 298)
Վարչական ծախսեր	18	(284 107)	(379 932)
Այլ եկամուտ	19	113 533	7 499
Այլ ծախսեր	19	(57 940)	(30 898)
Ֆինանսական եկամուտ	20	731 061	1 006 052
Ֆինանսական ծախսեր	20	(884 827)	(1 142 452)
Այլ օգուտ (կորուստ)	21	328 177	(34 445)
<b>Չուտ շահույթ (վնաս) նախքան հարկումը</b>		<b>2 405 037</b>	<b>2 948 570</b>
Շահութահարկի գծով ծախս	22	(407 191)	(580 945)
<b>Շարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)</b>		<b>1 997 846</b>	<b>2 367 625</b>
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
<b>Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք</b>		<b>1 997 846</b>	<b>2 367 625</b>
<b>Այդ թվում.</b> Չվերահսկվող բաժնեմասին վերագրվող		(14)	(1 752)
Մայր կազմակերպության սեփականատերերին վերագրվող		1 997 860	2 369 377

Տնօրեն՝

Վ. Հովակիմյան



Գլխավոր հաշվապահ՝

Ա. Մարտիրոսյան

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընդօրոգրվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ (էջ 8-25):

## Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

«ՏԵՔՍ» ՓԲԸ

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար ՀՀ դրամ	Կանոնադրական կապիտալ	Չբաշխված շահույթ (չծածկված վնաս)	Ընդամենը մայր կազմակերպության սեփականատերերին սեփական կապիտալ վերագրվող սեփական կապիտալ	Չվերահսկվող բաժնեմաս	Ընդամենը
2021թ հունվարի 1-ի դրությամբ	1	1 469 811	1 469 812	(1 984)	1 467 828
Շարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)	-	2 369 377	2 369 377	(1 752)	2 367 625
2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	1	3 839 188	3 839 189	(3 736)	3 835 453
2022թ հունվարի 1-ի դրությամբ	1	3 839 188	3 839 189	(3 736)	3 835 453
Շարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)	-	1 997 846	1 997 846	(14)	1 997 832
2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	1	5 837 034	5 837 035	(3 750)	5 833 285

Տնօրեն՝

Վ. Հովակիմյան



Գլխավոր հաշվապահ՝

Ա. Մարտիրոսյան

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունն պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ (էջ 8-25):

## Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն


«ՏԵԽ» ՓԲԸ

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար ՀՀ դրամ	2022թ	2021թ
<b>Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը</b>	<b>205 517</b>	<b>359 271</b>
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հանախորդներից ստացված դրամական միջոցներ	9 669 937	9 275 962
Այլ մուտքեր	824	398
Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ	(476 293)	(491 155)
Մատակարարներին և այլ կրեդիտորներին վճարված դրամական միջոցներ	(5 829 018)	(5 342 464)
Վճարված հարկեր և պարտադիր վճարներ	(1 668 239)	(636 546)
Այլ վճարումներ	(210 953)	(517 571)
<b>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր</b>	<b>1 486 258</b>	<b>2 288 624</b>
<b>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</b>		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռք բերումների գծով վճարներ	(10 012)	(18 793)
Ֆինանսական ակտիվների ձեռք բերումից ելքեր	(5 062)	-
Փոխառությունների մարումից մուտքեր	7 535 998	2 947 220
Փոխառությունների տրամադրումից ելքեր	(7 594 794)	(6 707 726)
Ստացված տոկոսներ	731 061	1 006 052
<b>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր</b>	<b>657 191</b>	<b>(2 773 247)</b>
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարկերից և փոխառություններից մուտքեր	3 946 108	1 847 205
Վարկերի և փոխառությունների մարումներ	(5 326 078)	(370 098)
Վճարված տոկոսներ	(884 827)	(1 142 452)
<b>Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր</b>	<b>(2 264 797)</b>	<b>334 655</b>
<b>Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ</b>	<b>(121 348)</b>	<b>(149 968)</b>
Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(1 716)	(3 786)
<b>Դրամական միջոցների տարեվերջի մնացորդը</b>	<b>82 453</b>	<b>205 517</b>

Տնօրեն՝

Վ. Հովակիմյան



Գլխավոր հաշվապահ՝

Ա. Մարտիրոսյան

Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ (Լջ 8-25):



# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

## 1. Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկություններ

### 1.1 Կազմակերպության մասին

«ՏԵԶՍ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ Ընկերություն) ստեղծվել է 20.09.2017թ ստեղծված «Էներգոտեխսպասարկում» ՓԲԸ անվանափոխության ճանապարհով:

Ընկերության կանոնադրությունը գրանցվել է ՀՀ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից, գրանցման թիվ 286.120.974724, հարկային հաշվառման համարը՝ 00474265:

Ընկերության իրավաբանական հասցեն է ք. Երևան, Մովսես Խորենացի 33:

Ընկերության կառավարման մարմիններն են՝

✚ Բաժնետերերի ընդհանուր ժողովը

✚ Ընկերության տնօրենը:

### 1.2 Հիմնական գործունեությունը

Ընկերության հիմնական գործունեության տեսակներից է հանդիսանում բնակելի, հասարակական և արտադրական շենքերի շինարարությունը:

## 2. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմունքները

### 2.1 Համապատասխանության մասին հայտարարություն

Ներկայացվող համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ ՓՄԿ-ի ՖՀՄՄ) պահանջների համաձայն:

### 2.2 Չափման հիմունքները

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

### 2.3 Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

Խմբի ֆունկցիոնալ արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է՝ ՀՀ դրամը (դրամ): Այն հանդիսանում է նաև Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

### 2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՓՄԿ-ի ՖՀՄՄ-ի համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Խմբի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

## 3. Նշանակալի հարցերի նկատմամբ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը

### 3.1 Համախմբման հիմքերը

#### Դուստր ընկերություններ

Դուստր են համարվում այն ընկերությունները, որոնք վերահսկվում են Խմբի կողմից: Վերահսկողությունն առկա է, երբ Խումբն իրավունք ունի ուղղակիորեն կամ անուղղակիորեն կառավարել ընկերության ֆինանսական և տնտեսական քաղաքականությունը՝ նրա գործունեությունից օգուտներ ստանալու նպատակով: Դուստր ընկերության ֆինանսական հաշվետվությունները ներառված են համախմբված ֆինանսական հաշվետվություններում՝ սկսած վերահսկողությունը ստանձնելու ամսաթվից մինչև վերահսկողության դադարեցման ամսաթիվը:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներառված են հետևյալ դուստր ընկերությունները.

Ընկերության անվանումը	Մասնաբաժին տոկոս	Գրանցման երկիր	Գրանցման ամսաթիվ	Գործունեության ոլորտը	Ձեռք բերման ամսաթիվը
«Վոլիոս նախագծային ինստիտուտ» ՓԲԸ	100%	ՀՀ	30.12.2016	Էներգետիկ կառույցների նախագծում, նախագծերի փորձաքննություն	24.12.2018
«Նաշ Դոմ» ՓԲԸ	100%	ՀՀ	25.11.2015	Մանրածախ առևտուր	24.12.2018
«Նեֆտայրոդուկտիվեստ» ՓԲԸ	100%	ՀՀ	14.04.2016	Մանրածախ առևտուր	24.12.2018
«Հայթեք» ՓԲԸ	100%	ՀՀ	18.09.2018	Տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային տեխնիկայի բնագավառում այլ գործունեություն	18.09.2018
«Արար Արտ» ՓԲԸ	90%	ՀՀ	29.03.2019	Ծառայությունների մատուցում,	13.05.2020
«Տ-Տելեկոմ» ՍՊԸ	100%	ՀՀ	31.10.2011	Մասնագիտական, գիտական և տեխնիկական այլ գործունեություն	19.05.2020
«Մաստեր Սիթի» ՓԲԸ	100%	ՀՀ	17.08.2020	Ծինակցության մեծածախ առևտուր	17.08.2020
«Էներգոնորոգում» ԲԲԸ	100%	ՀՀ	24.09.2003	Տրանսֆորմատորների, էլեկտրական շարժիչների, գեներատորների, բաշխիչ վահանների և կոմուտացիոն սարքավաճների նորոգում և տեխնիկական սպասարկում	31.08.2020
«Թի-Էլ-Էս» ՓԲԸ	60.2%	ՀՀ	27.07.2022	Բեռնափոխադրման կազմակերպման միջնորդական գործունեություն	15.11.2022

**Համախմբման արդյունքում չներառված գործարքներ**

Համախմբված ֆինանսական հաշվետվություններում ամբողջովին բացառվում են ներխմբային հաշիվների մնացորդները և գործարքները, ինչպես նաև ներխմբային գործարքներից առաջացած բոլոր չիրացված օգուտները:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններում համախմբվել է նաև «Դամալա Գրուպ» ՍՊԸ-ում Ընկերության որպես ասոցիացված կազմակերպությունում հաշվառվող ներդրումներ ունեցած 50 տոկոսի բաժնեմասը՝ հաշվառված բաժնեմասնակցության մեթոդով:

**3.2 Հիմնական միջոցներ**

Հիմնական միջոցի միավորը՝ որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը արժեզրկումից կուտակված կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կատարվելու ժամանակաշրջանում:

Հիմնական միջոցի մաշվածության գումարն իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխվում է՝ կիրառելով մաշվածության հաշվարկման գծային մեթոդը: Հիմնական միջոցի մաշվածության

հաշվարկումը սկսվում է, երբ այն մատչելի է շահագործման համար, այսինքն, երբ հիմնական միջոցի գտնվելու վայրը և վիճակը ապահովում են նրա շահագործումը Ընկերության մտադրություններին համապատասխան: Յուրաքանչյուր ժամանակաշրջանի մաշվածության գումարը ճանաչվում է ֆինանսական արդյունքներում, բացառությամբ եթե այն ներառվել է մեկ այլ ակտիվի հաշվեկշռային արժեքում:

Հիմնական միջոցների համար սահմանված օգտակար ծառայության ժամկետներն են՝

<i>շենքեր</i>	<i>20 տարի</i>
<i>սարքավորումներ</i>	<i>5տարի</i>
<i>արտադրատնտեսական գույք</i>	<i>8 տարի</i>
<i>հաշվողական և համակարգչային տեխնիկա</i>	<i>1 տարի:</i>

### 3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվի միավորը՝ որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կուտակված կորուստները:

Ոչ նյութական ակտիվի ամորտիզացիան հաշվարկվում է այն պահից, երբ ակտիվը մատչելի է օգտագործման համար:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ կիրառելով գծային մեթոդը:

Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են՝

<i>Համակարգչային ծրագրեր</i>	<i>3-10 տարի</i>
<i>Այլ ոչ նյութական ակտիվներ</i>	<i>1-10 տարի</i>

Ոչ նյութական ակտիվն ապաճանաչվում է օտարման ժամանակ, երբ օգտագործումից կամ օտարումից այլևս ապագա տնտեսական օգուտներ չեն ակնկալվում: Ոչ նյութական ակտիվի ապաճանաչումից առաջացած օգուտը կամ կորուստը, որը չափվում է որպես օտարումից գուտ մուտքերի և ակտիվի հաշվեկշռային արժեքի միջև տարբերություն, ճանաչվում է շահույթում կամ վնասում, երբ այդ ակտիվն ապաճանաչվում է:

### 3.4 Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Խմբի համար ֆունկցիոնալ արժույթից տարբերվող այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված՝ արտարժույթային շուկա ներում արտարժույթի նկատմամբ հայկական դրամի միջին փոխարժեքով

Յուրաքանչյուր հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքը, սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն գործառնության ամսաթվի փոխանակման փոխարժեքով և իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն իրական արժեքի որոշման օրվա փոխանակման փոխարժեքով: Այն ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Փոխարկման հետևանքով առաջացած արտարժույթային տարբերությունները ճանաչվում են ֆինանսական արդյունքում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

### 3.5 Պաշարներ

Պաշարները չափվում են ինքնարժեքից և հնարավոր իրացման գուտ արժեքից նվազագույնով:

Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման, արտադրանքի վերամշակման բոլոր ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները: Պաշարների հնարավոր իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համարման և վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները:

Փոխադարձ փոխարկելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է «առաջին մուտք՝ առաջին ելք» ԱՄԱԵ բանաձևով: Փոխադարձ փոխարկելի չհանդիսացող պաշարների, ինչպես նաև հատուկ ծրագրերի համար նախատեսված ու արտադրված ապրանքների կամ ծառայությունների միավորի ինքնարժեքը որոշվում է դրանց կոնկրետ ծախսումների հստակ առանձնացման միջոցով:

Երբ պաշարները վաճառվում են, դրանց հաշվեկշռային արժեքը ճանաչվում է որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ ճանաչվում է դրանց հետ կապված հասույթը:

### 3.6 Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները), և պարգևավճարները:

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց զեղչման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելուց հետո:

### 3.7 Հասույթ

Խումբը հասույթը պետք է չափի ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով: Ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքը հաշվի է առնում Խմբի կողմից տրամադրվող ցանկացած առևտրական զեղչերի, ժամկետից շուտ վճարման զեղչերի և քանակային զիջումների գումարները:

Խումբը հասույթում պետք է ներառի ստացված կամ ստացվելիք տնտեսական օգուտների միայն այն համախառն ներհոսքը, որը պատկանում է Խմբին պատկանող Ընկերությանը: Խմբին պատկանող Ընկերությունը հասույթում չպետք է ներառի երրորդ անձանց անունից հավաքագրված բոլոր գումարները, օրինակ՝ վճարներից հարկերը, ապրանքների և ծառայությունների գծով հարկերը և ավելացված արժեքի հարկը:

### 3.8 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Խմբին պատկանող Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապահանջվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ երբ փոխանցվում են ֆինանսական ակտիվները, բոլոր նշանակալից ռիսկերն ու հատուցումները:

Ֆինանսական պարտավորությունները ապահանջվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Երբ ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը սկզբնապես ճանաչվում է, Խմբին պատկանող Ընկերությունը պետք է այն չափի գործարքի գնով (ներառյալ գործարքի հետ կապված ծախսումները):

Խմբի ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորություններն ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 24-ում:

### 3.9 Ակտիվների արժեզրկում

Արժեզրկումից կորուստը առաջանում է, երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է դրա փոխհատուցվող գումարը: Ակտիվի փոխհատուցվող գումարը դրա իրական արժեքից՝ հանած վճարների ծախսումները, և օգտագործման արժեքից առավելագույնն է:

Իրական արժեք՝ հանած վճարների ծախսումները, ակտիվի վճարներից ստացվող գումարն է՝ իրագել և պատրաստական կողմերի միջև «անկախ կողմերի միջև գործարքում»՝ հանած օտարման ծախսումները:

Օգտագործման արժեքը ապագա դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքն է, որն ակնկալվում է ստանալ ակտիվից:

Ընկերությունը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ պետք է գնահատի՝ առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի՝ ակտիվը կարող է արժեզրկված լինել: Եթե առկա է որևէ այդպիսի հայտանիշ, ապա Ընկերությունը պետք է գնահատի ակտիվի փոխհատուցվող գումարը: Եթե արժեզրկման որևէ հայտանիշ չկա, ապա անհրաժեշտ չէ գնահատել փոխհատուցվող գումարը:

Ընկերությունը արժեզրկումից կորուստը պետք է անմիջապես ճանաչի շահույթում կամ վնասում:

Ընկերությունը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ պետք է գնահատի, թե առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի հնարավոր է, որ նախորդ ժամանակաշրջաններում ճանաչված արժեզրկումից կորուստը այլևս գոյություն չունի կամ նվազել է:

Ընկերությունը արժեզրկումից կորուստի հակադարձումը անմիջապես պետք է ճանաչի շահույթում կամ վնասում:

### **3.10 Պահուստներ, պայմանական ակտիվներ և պարտավորություններ**

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Խմբին պատկանող Ընկերությունը ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը պետք է իրենից ներկայացնի այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար: Չեղյալ գումարը պետք է լինի այն դրույքը՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պահուստները պետք է վերանայվեն և ճշգրտվեն՝ ընթացիկ լավագույն գնահատականը արտացոլելու համար: Եթե այլևս հավանական չէ, որ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, ապա պահուստը պետք է հակադարձվի:

Պահուստը պետք է օգտագործվի միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

Պայմանական ակտիվները չեն ճանաչվում ֆինանսական հաշվետվություններում, բայց բացահայտվում են, երբ տնտեսական օգուտների մուտքը հավանական է համարվում:

Պայմանական պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական հաշվետվություններում այն դեպքում, երբ հավանական է պարտավորությունը լուծելու համար տնտեսական օգուտների արտահոսք և այդ արտահոսքը կարող է խելամտորեն գնահատվել: Դրանք բացահայտվում են այնքան ժամանակ, մինչև տնտեսական օգուտները մարմնավորող միջոցների արտահոսքի հավանականությունը շատ փոքր է:

### **3.11 Շահութահարկ**

Շահութահարկը ներառում է բոլոր ազգային և արտերկրյա հարկերը, որոնց հիմքում ընկած է հարկվող շահույթը:

Շահութահարկի գումարները բաղկացած են ընթացիկ հարկից և հետաձգված հարկից: Ընթացիկ հարկը ընթացիկ ժամանակաշրջանի կամ նախորդ ժամանակաշրջանների հարկվող շահույթի (հարկային վնասի) գծով վճարման (փոխհատուցման) ենթակա շահութահարկի գումարն է: Հետաձգված հարկը ապագա ժամանակաշրջաններում վճարման կամ փոխհատուցման ենթակա շահութահարկի գումարն է, որը սովորաբար կազմակերպության կողմից իր ակտիվներն ու պարտավորությունները ընթացիկ հաշվեկշռային արժեքով փոխհատուցելու կամ մարելու արդյունք է, և տվյալ պահին չօգտագործված հարկային վնասները և հարկային գեղչերը հաջորդ ժամանակաշրջաններ տեղափոխելու հարկային հետևանք:

### **3.12 Փոխառության ծախսումներ**

Փոխառության ծախսումները տոկոսային և այլ ծախսումներն են, որոնք Խումբը կրում է՝ կապված փոխառու միջոցների ստացման հետ:

Խումբը բոլոր փոխառության ծախսումները պետք է ճանաչի որպես ծախս՝ շահույթում կամ վնասում՝ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք կատարվել են:

#### 4. Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Փոխանցող հարմարանքներ	Մեքենա - սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Տեսական գույք, արտադրական գույք, այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
<b>2021թ հունվարի 1-ի դրությամբ</b>	<b>350</b>	<b>175 753</b>	<b>17 379</b>	<b>36 190</b>	<b>229 672</b>
Ավելացումներ	-	14 306	-	11 897	26 203
Օտարումներ, դուրս գրումներ	(350)	(24 791)	(2 000)	(1 134)	(28 275)
<b>2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>-</b>	<b>165 268</b>	<b>15 379</b>	<b>46 953</b>	<b>227 600</b>
<b>2022թ հունվարի 1-ի դրությամբ</b>	<b>-</b>	<b>165 268</b>	<b>15 379</b>	<b>46 953</b>	<b>227 600</b>
Ավելացումներ	-	8 059	-	1 953	10 012
Օտարումներ, դուրս գրումներ	-	-	-	-	-
<b>2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>-</b>	<b>173 327</b>	<b>15 379</b>	<b>48 906</b>	<b>237 612</b>
<b>Կուտակված մաշվածություն</b>					
<b>2021թ հունվարի 1-ի դրությամբ</b>	<b>75</b>	<b>148 150</b>	<b>14 776</b>	<b>16 652</b>	<b>179 653</b>
Տարվա ծախս	69	11 055	353	8 834	20 311
Օտարումներ, դուրս գրումներ	(144)	(24 704)	(546)	(777)	(26 171)
<b>2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>-</b>	<b>134 501</b>	<b>14 583</b>	<b>24 709</b>	<b>173 793</b>
<b>2022թ հունվարի 1-ի դրությամբ</b>	<b>-</b>	<b>134 501</b>	<b>14 583</b>	<b>24 709</b>	<b>173 793</b>
Տարվա ծախս	-	15 148	340	8 007	23 495
Օտարումներ, դուրս գրումներ	-	-	-	-	-
<b>2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>-</b>	<b>149 649</b>	<b>14 923</b>	<b>32 716</b>	<b>197 288</b>
<b>Չուտ հաշվեկշռային պրոճեր</b>					
<b>2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>-</b>	<b>30 767</b>	<b>796</b>	<b>22 244</b>	<b>53 807</b>
